Ես վաղուց ճանաչում էի այն խարտեաշ մետաքսանման գիսակները, ինձ ծանօթ էր այն հրեշտակային կերպարանքը, որ իր մերկութեան մէջ աւելի սքանչելի էր:

Նոյն միջոցին ինձ տիրեց մի զգացմունք. դա նմանում էր այն սարսափելի զգացմունքին, որ տանջում է մի եղեռնագործին, որը մեղանչել էր մի որեւիցէ սրբութեան դէմ:

Զարհուրելի՜ է խղճի խայթն, երբ նա սկսում է ծակոտել մի սիրտ, որ դեռ ոչ բոլորովին կորուսել էր իր կենսական զօրութիւնը... «ես սիրում էի այս անմեղ աղաւնեակին... — մտածում էի ես, — բայց Մարօն, կիսավայրենի Մարօն խլեց այն սիրտը, «որ պատկանում էր Սօնային»...

Իմ մտածութիւնները ընդհատեց մի մարդ, որ ձորի միջով գալով, ինձ երեւաց, թէ ուղիղ դիմում էր դէպի քարանձաւը: Նա ոտքից ցգլուխ հագած ունէր սեւ զգեստ կոշտ մազէ շալերից: Նրա բոլոր կերպարանքից յայտնի էր, թէ անապատական աբեղայ պէտք է լինի: Նա ընթանում էր հանդարտ եւ հաստատուն քայլերով, եւ մեղմ ձայնով եղանակելով մի տխուր մեղեդի:

Ես իսկոյն վազեցի դէպի նրա կողմը եւ առաջը կտրեցի, ասելով.

— Հեռուից անցէք, չմօտենաք քարանձաւին, այնտեղ լողանում է մի օրիորդ, որ իմ ազգականն է:

— Ես դէպի այս կողմն եմ գնում, — պատասխանեց աբեղան, ցոյց տալով ծովակը, եւ մի քնոտողական հայեացք ձգելով իմ երեսին, անցաւ:

Բայց ի՞նչ խորհրդական մարդ էր դա. ես մտածում էի. անտարակոյս նոյն լեռների մէջ առանձնացած ճգնաւորներից մէկը պէտք է լինէր: Երբ աւելի հեռացաւ, նա փոխեց երգի եղանակը. այժմ նրա ձայնը լսելի էր լինում աւելի բարձր հնչիւններով: Ես բոլորովին զարմացայ. այն մի հոգեւոր մեղեդի չէր, այնպիսի երգեր միայն կարելի է լսել Արաբիայի դաշտերում, երբ բեդոինը միայնակ անցնում է անապատի միջով:

Նոյն միջոցին ինձ զարմացրուց մի այլ երեւոյթ եւս. ես տեսայ, որ կախարդ Սուսանը իր փոքրիկ վհուկ ընկերի հետ դուրս վազեցին թփերի միջից եւ միացան աբեղայի հետ: Աբեղան գրկեց Հիւբբիին, համբուրեց եւ ապա միասին անհետացան բլուրների հետքում:

Ի՞նչ գաղտնիք էր այդ. ի՞նչ գործ ունէր աբեղան կախարդ պառաւի հետ օրոայ մի այնպիսի տարաժամ պահուն: Նրա երգն անգամ որպէս ես հասկացայ, իր խորհրդական հնչիւնների մէջ ունէր մի ծածուկ նշանակութիւն, որ դուրս կանչեց կախարդին իր թաքստեան տեղից: Եւ ի՞նչ լեզոի երգ էր այն: